«Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2024 թվական N __ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 105-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33–րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27–ի «**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին**» N 105–Լ որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետը «շրջանակներում» բառից հետո լրացնել «նոր, չշահագործված» բառերով.
- Որոշման հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) լիզինգի պայմանագիրը կնքվում է՝ կոմբայնների համար՝ 7-10 տարի, տրակտորների համար՝ 5-6 տարի, շարքացանների, հավաքիչ-մամլիչների համար՝ 3-6 տարի, այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի, տրակտորներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա միևնույն լիզինգառուին միաժամանակ լիզինգով տրամադրելու դեպքում՝ 5-6 տարի մարման ժամկետով.».

- Որոշման հավելվածի 12-րդ կետը լրացնել նոր 7-րդ և 8-րդ

ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումն սկսվում է լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից: Լիզինգի պայմանագրի կնքման պահից մինչև լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրը կարող է հաշվարկվել տոկոս, որը չի սուբսիդավորվում և չի կարող գերազանցել լիզինգի պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը.

8) N 1 Աղյուսակի 10-12-րդ տողերում նշված վճարները չեն ներառվում լիզինգի գումարի մեջ:».

- Որոշման հավելվածի 12-րդ կետից հետո լրացնել նոր 12.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Ծրագրի շրջանակում լիզինգի տրամադրման և աջակցության պայմանների պահպանման պատասխանատվությունը կրում է ֆինանսական կառույցը:».

- Որոշման հավելվածի 13-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ֆինանսական կառույցը նախորդ ամսվա լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը ԳՖԿ-ին է ներկայացնում ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: ԳՖԿ-ն հայտը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական կառույցի հետ ճշգրտում է հայտերը, ստուգում է ծրագրի պահանջներին համապատասխանությունը և դրական եզրակացությամբ ներկայացնում նախարարություն: Յուրաքանչյուր հաջորդ ամիս ներկայացվող սուբսիդավորման հայտի մեջ ներառվում է բացառապես նախորդ ամսվա համար հաշվարկված (բացառությամբ՝ ծրագրի 12-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դադարի շրջանին հաջորդող ամսվա համար հաշվարկման դեպքի) սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքների գումարները: Նախարարությունը իր և ԳՖԿ-ի միջև կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրի հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցում է ԳՖԿ-ին (ֆինանսական միջոցների առկայության դեպքում), որն էլ 5 աշխատանքային օրվա ընթացքում գումարը փոխանցում է համապատասխան ֆինանսական կառույցի հաշվեհամարին: Հայտը ծրագրի պահանջները չբավարարելու դեպքում ԳՖԿ-ն 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղյակ պահել ֆինանսական կառույցին՝ նշելով չբավարարման հիմքերը:».

- Որոշման հավելվածի N 1 Աղյուսակի 4-րդ տողի 2-րդ սյունակում «փաստացի» բառը հանել.
- Որոշման հավելվածի N 1 Աղյուսակի 5-րդ տողի 2-րդ սյունակում «տոկոս» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների և զինվորական ծառայության

պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարման ենթակա լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս» բառերը.

- Որոշման հավելվածի N 1 Աղյուսակի 7-րդ տողի 2-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «7-10» թվերով, «համար՝ 6» բառերը փոխարինել «համար՝ 5-6» բառերով, իսկ «մարման ժամկետը կարող է սահմանվել 6» բառերը փոխարինել «՝ 5-6» բառերով.
- Որոշման հավելվածի N 1 Աղյուսակի 10-րդ տողի 2-րդ սյունակում հանել «, որը կարող է ներառվել լիզինգի գումարի մեջ» բառերը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ